# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Աբովյան** **14/11/2024**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/3
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Զարոյանը, Վրեժ Մամուլյանը, Կարեն Սերոբյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Արմեն Շմավոնյանը, Դիաննա Երեմյանը, Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը, Մարիյա Բաղդասարյանը
Նիստին մասնակցելու ցանկություն էր հայտնել Աբովյան համայնքի բնակիչ Հ. Կարայանը: Խնդրանքը բավարարվել էր, և վերջինս մասնակցում էր նիստին:

**Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը**

**Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը**

Նախքան նիստի օրակարգին անցնելը Վ. Բաբաջանյանը հայտնեց, որ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ, համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Դ. Զարոյանը տեղեկացրել է, որ ունի առողջական խնդիրներ, չի մասնակցելու նիստին:

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 14-ի

յոթերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 205-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 204-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
3) 2024 թվականի ընթացքում ձեռք բերված հիմնական միջոցները Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում ընդգրկելու մասին.
4) Աբովյանի համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված գույքերը համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռներում ներառելու մասին.
5) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին.
6) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 04-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
7) «ՄՎ ԷԼԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.
8) «ԴԵՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.
9) Քաղաքացիներ Սոս Արզումանյանի, Գառնիկ Ավետիսյանի և Համլետ Կարապետյանի կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.
10) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 146-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
11) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 147-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
12) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 148-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
13) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 149-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
14) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 150-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
15) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 151-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
16) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 152-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
17) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 154-Ա որոշման մեջ փոփոխություն կատաuրելու մասին.
18) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 155-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
19) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 156-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
20) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 157-Ա որոշման

մեջ փոփոխություն կատարելու մասին.
21) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 30-ի N 106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
22) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախաորահը տրամադրելու մասին.
23) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին.
24) Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունների օրինակները և սեփականության օտարման պայմանագրերի նախագծերն ի գիտություն ընդունելու մասին.
25) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու մասին.
26) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0144-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու մասին.
27) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղում գտնվող 07-018-0036-0007 կադաստրային ծածկագրում ներառված 0.08 հեկտար մակերեսով համայնքային հողամասի նկատմամբ Ստեփան և Գայանե Հակոբի Ղազարյաններին ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու և հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
28) Սուրեն Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
29) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Երիտասարդական փողոցի թիվ 14/19 հասցեում գտնվող հողամասը Վահագն Եղիազարյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
30) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Առինջ գյուղի Վ. Տերյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 7/1 հասցեում գտնվող հողամասն Արմո Միքայելյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
31) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Պտղնի գյուղի Պտղնի-2 այգետարածքի 21-Ա թաղամաս թիվ 1/1 հասցեում գտնվող հողամասը Վարուժան Շահբազյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
32) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0288 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
33) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0128-0346 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
34) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 6 շենքի թիվ 11/1 բնակարանն անհատույց օտարելու մասին.
35) Հողատարածքի վարձակալության մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին.
36) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 217-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

37) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
38) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի թիվ 2/3 հասցեում գտնվող հողամասը «Աբովյանի թթխմորի գործարան» բաց բաժնետիրական ընկերությանը ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
39) Աբովյանի քաղաքապետի 2008 թվականի հունիսի 09-ի N 102 որոշմանը համաձայնություն տալու և որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
40) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի 2/703 հասցեում գտնվող ավտոտնակի և հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցնելու և անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
41) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 6-րդ միկրոշրջանի 6/39 հասցեում գտնվող ավտոտնակի և հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցնելու և անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
42) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի 2/408 հասցեում գտնվող ավտոտնակի և հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցնելու և անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
43) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող 07-011-0274-0030 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
44) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Վ. Բաբաջանյանը նշեց նաև, որ օրակարգում ներառված բոլոր հարցերը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել են ավագանու անդամներին, ավագանու մշտական հանձնաժողովներին: Հանձնաժողովները ներկայացրել են իրենց առաջարկությունները՝ բացառությամբ «Իրավական հարցերի» մշտական հանձնաժողովի, որը նիստ չի գումարել:
Շահերի բախման վերաբերյալ դիմումներ չկան:

Ծավալվեց քննարկում: Ավագանու անդամների կողմից առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 26-րդ ենթակետը հանել օրակարգից:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 154-Ա/

**Լսեցին**

***ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 205-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «5 489 488.0» թիվը փոխարինել «5 795 039.0» թվով, 2-րդ ենթակետում «7 604 740.8» թիվը փոխարինել «7 910 291.8» թվով.
2) որոշմամբ հաստատված 1, 2 և 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Տ. Գեղամյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք նշված լուսավորության հին համակարգերը, որոնք տրամադրվելու են գյուղական բնակավայրերին, հին չեն: Զեկուցողի կողմից պատասխանվեց, որ դրանք անցած տարվա լուսավորության միջոցներն են, որոնք արդեն իսկ վերանորոգվել են և առաջիկայում կտրամադրվեն գյուղական բնակավայրերին:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 155-Ն/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 204-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հաշվի առնելով Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 127-Ա որոշումը, «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ի N Ք-7629), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար

հաստատելու մասին» N 204-Ա որոշմամբ հաստատված հավելված 22-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Տ.Գեղամյանը հարց տվեց, թե ի՞նչ մեքենա է տրամադրվելու Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը Առինջ բնակավայրում աղբահանությունն իրականացնելու համար և ի՞նչ նոր հաստիք է ավելանալու:

Զեկուցողը նշեց, որ նոր մեքենա է գնվել և ավելացվել է ավտոմեխանիկի հասիք:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 156-Ա/

**Լսեցին**

***2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. 2024 թվականի ընթացքում ձեռք բերված 66 655 778 (վաթսունվեց միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասունութ) դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները ընդգրկել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 157-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆՆԱ ԶՈԲԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյանի համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված 20 846 651 (քսան միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր հիսունմեկ) դրամ հաշվեկշռային արժեքով գույքերը հանել Աբովյանի համայնքապետարանի հաշվեկշռից և տեղափոխել համապատասխան համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռ՝ համաձայն 1-9 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 158-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆՆԱ ԶՈԲԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 19 440 000 (տասնինը միլիոն չորս հարյուր քառասուն հազար) դրամ հաշվեկշռային արժեքով ինքնաթափ բեռնատար մեքենան (MAZ 4571N2-537-000, գույքային համար՝ 4101113, նույնացման համար՝ Y3M4571N2R0000110, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր՝ N AJ006939) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 159-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 4-Ա որոշմամբ ընդունված կանոնակարգի 25-րդ և 30-րդ կետերը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Աբովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին» N 04-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Վ. Բաբաջանյանը նշեց, որ «Իրավական հարցերի» մշտական հանձնաժողովը, հանձնաժողովի նախագահի՝ «Հանրապետություն» խմբակցության անդամ Գոռ Գալստյանի հրաժարականից հետո դեռևս նախագահ չի ընտրել:

Առաջարկեց քննարկել նախագիծը:

Տ. Գեղամյանն առաջարկեց խոսքը տրամադրել «Հանրապետություն» խմբակցությունից նիստին ներկա գտնվող գործընկերոջը:

«Հանրապետություն» խմբակցությից ավագանու անդամ Հ. Հարությունյանը հայտնեց, որ խմբակցությունը դեռևս որոշում չի կայացրել, իսկ որոշման դեպքում սահմանված կարգով կտեղեկացնեն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 160-Ա/

**Լսեցին**

***«ՄՎ ԷԼԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի հոկտեմբերի 9-ին կայացած հանրային

քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «ՄՎ ԷԼԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի օգոստոսի 28-ի N Տ-1703), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Տալ նախնական համաձայնություն «ՄՎ ԷԼԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի՝ Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակ 3/4 և 3/6 հասցեներում, բազմաբնակարան բնակելի շենքեր կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց օրակարգի 1-ին կետի 7-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ նույնաբովանդակ հարցեր են:

Հարցերը դրվեցին քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 161-Ա/

**Լսեցին**

***«ԴԵՄԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի հոկտեմբերի 11-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «ԴԵՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 3-ի N Տ-1736), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Տալ նախնական համաձայնություն «ԴԵՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի Արամուսի բազալտի հանքավայրի Դեմեր 3 և Դեմեր 4 տեղամասերում իրականացնելու օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 162-Ա/

**Լսեցին**

***ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՈՍ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ, ԳԱՌՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի հոկտեմբերի 14-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով քաղաքացիներ Սոս Արզումանյանի, Գառնիկ Ավետիսյանի և Համլետ Կարապետյանի գրությունը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N Ք-6749), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Տալ նախնական համաձայնություն քաղաքացիներ Սոս Արզումանյանի, Գառնիկ Ավետիսյանի և Համլետ Կարապետյանի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի՝ Աբովյան քաղաքի Սևանի փողոց 4/10 հասցեում, բազմաբնակարան բնակելի շենքեր կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 163-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 146-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման

մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» 146-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց օրակարգի 1-ին կետի 10-21-րդ ենթակետերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ նույնաբովանդակ հարցեր են:

Հարցերը դրվեցին քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 164-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 147-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 3 միջհամայնքային մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 147-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 165-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 148-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 148-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 166-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 149-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 149-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 167-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 150-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 150-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել

կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 168-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 151-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՑԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 151-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 169-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 152-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 152-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 170-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 154-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Աբովյանի N 12 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն

անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 154-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 171-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 155-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՑԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկու «Զեփյուռ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 155-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 172-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Արովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի ««Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կամարիսի «Կակաչ» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 156-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 173-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման

մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի «ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի «Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 157-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 174-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1329-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 30-ի «Աբովյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 26-ի N 2424 որոշումն ու Աբովյան համայնքի «Վերին Պտղնի գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 106-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 175-Ա/

**Լսեցին**

***ԱՐՌՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՌՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՁԱՐԵՀ ՍԱՀԱԿՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՍՐԱՀԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալի գրությունները (մուտք՝ 2024 թվականի հոկտեմբերի 23-ի N Պ-2350 և 2024 թվականի նոյեմբերի 5-ի N Պ-2460), Արովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Համաձայնություն տալ Արովյան համայնքի «Աբովյան քաղաքի Ձարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախասրահը 2024 թվականի դեկտեմբերի 03-ին, ժամը 10:00-ից 14:00-ն Միասնական սոցիալական ծառայությանն անվճար տրամադրելու՝ Երևանի պետական համալսարանի և Եվրասիա միջազգային համալսարանի կողմից «Կարիերայի նոր հնարավորություններ և հեռանկարներ» նախագծի շրջանակում աշխատանքի տոնավաճառ իրականացնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 176-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. 2024-2025 թվականների ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 177-Ա/

**Լսեցին**

***ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2311-Ն և 2007 թվականի հունվարի 25-ի N 108-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գրությունը (մուտք՝ 2024 թվականի հոկտեմբերի 17-ի, N Տ-2068) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի գյուղի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի N 214-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2311-Ն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող թվով 11 տարածքների սեփականության նկարագրության արժանագրությունները և օտարման պայմանագրերի նախագծերն ընդունել ի գիտություն:
2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել գործընթացը և պայմանագրերի կնքումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 178-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Արովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. 2024-2025 թվականների ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 15-ի N 15062022-07-0118 վկայական) Արովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի Երևան-Սևան մայրուղու 1-2 կմ 12 հասցեում գտնվող 07-062-0105-0057 կադաստրային ծածկագրով, 1.05 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության, հողամասը և դրա վրա գտնվող 07-062-0105-0057-001 և 07-062-0105-0057-002 կադաստրային ծածկագրերով, 41.63 և 34.27 քառակուսի մետր մակերեսներով բնակելի նշանակության պարիսպները: Աճուրդի մեկնարկային գինը սահմանել 425 716 000 (չորս հարյուր քսանհինգ միլիոն յոթ հարյուր տասնվեց հազար) դրամ՝ հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ «404-Վ/024» գնահատման հաշվետվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-11

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 179-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-018-0036-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ 0.08 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԵՓԱՆ ԵՎ ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲԻ ՂԱԶԱՐՅԱՆՆԵՐԻՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 3-րդ մասի, 72-րդ հոդվածի 2-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիները ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են համայնքի հողից, հաշվի առնելով «ԱՐԱՅԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2024 թվականի հոկտեմբերի 21-ին տրված եզրակացությունը, հիմք

ընդունելով Ստեփան և Գայանե Ղազարյանների դիմումը (մուտք՝ 2024 թվականի հոկտեմբերի 22-ի N Ք-7673), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
